Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Նաւասարդ

ՄԻԱԻՆՈՅՆ

Դաժանութ

891.99
Ն-58

21.33

ՑԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՆ

ՄԻԵԻՆՈՅՆ ԴԱԳԱՂՈՒՄ...

(Պատկեր)

891.99
Ե-58

ԹԻՖԼԻՍ
Էլեքտրաշարժ տպարան „ՀԵՐՄԷՍ“ ընկերութեան
1905 (123)

09 NOV 2011

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԽՍԱՑԵԱՆ

ᲒᲔᲚ 99
Ⴑ-58

ՄԻԵՒՆՈՅՆ ԴԱԳԱՂՈՒՄ...

1001
806

(Պատկեր)

РЕДАКЦІЯ ГАЗЕТЫ „МШАКЪ" ТИФЛИСЪ

ԹԻՖԼԻՍ
Էլեքտրաշարժ տպարան „ՀԵՐՄԷՍ" ընկերութեան
1905 (123)

08.04.2015
28622

Дозволено цензурою, 20 Іюня 1905 года. г. Петербургъ.

ՄԻԵՒՆՈՅՆ ԴԱԳԱՂՈՒՄ...

Ամպամած մռայլ օր էր կանգնած լքեալ Բ... քաղաքի վրայ, որը դեռ ուշքի չէր եկել և սգում էր լուռ ու մունջ։ Միքանի օր առաջ թափված անմեղ մարդկանց յորդահոս արեան հետքը չէր ոչնչացել երկրի վրայից. ամեն ինչ անխտիր կլանող հսկայ ծովը հրէշային իրականութիւ-

նից յուզված շարունակում էր փոթորկվել. ալիքները լեզու առած՝ մրմնջում էին — եղբայրասպանութիւն...

Եղանակը բաւական ցուրտ էր։ Քաղաքում կենդանութեան նշոյլ չէր նկատվում. կարծես նրա բնակիչները իսպառ ջնջվել էին երկրանի սարքած մահաբեր դաւադրութիւնից։

Հեռվում երևում էին ահաբեկված Բալախանին ու Սև քաղաքը, որոնք, կարծես, աւելի էին սեացել. բայց ոչ թէ սովորական ծխից ու մազութից, այլ ստորաքարշ սատանայի սև սրից սարսափած... Այլևս չէ լսվում ամեհի մեքենաների խլացուցիչ գոռոցն ու աղմուկը. անդորրութիւն և խորհրդաւոր լռութիւն է տիրում..

Սակայն Բ. քաղաքի դերեզմանոցում աւելի մեծ շարժում կայ. այնտեղ մի կողմում կուտակված են նահատակների դիակները, որոնք այլանդակված և կարծես վայրենի գազաններից յօշոտված, այստեղ-այնտեղ թափթափված են իրար վրայ ինչպէս ապրանքի կոյտեր... Նրանց մէջ կան զառամեալ ծերունիներ, նորափթիթ կոյս աղջիկներ, դեռահաս, առոյգ երիտասարդներ, չաքաշ մայրեր, սրախողխող մանկիկներ, որոնց անմեղ, մեռելային դէմքերը դէպի երկինք դարձած՝ նախատում էին նախախնամութեան անտարբերութիւնը...

Հէքիաթական աշխարհի մի կենդանի պատկեր էր այդ տեսարանը։

Որդեկորոյս մայրն իր մինուճար զաւակին էր փնտրում լալագին, արագօրէն դիակները պտրտելով. ջահել կինը իր սիրած նորապսակ ամուսնուն էր որոնում, խելագարի նման շարժումներ գործելով, փոքրիկ մանուկները «հայրիկ ջան, մայրիկ ջան» ող-

բալով, կանչում էին իրանց ծնողներին…

—Թըխկ, թըխկ… լսվում էր գերեզմանատան մէջ գերեզմանափորների բրիչների ձայնը։ Նրանք անընդհատ փորում էին ու փորում, սառն հողի մէջ ամփոփելու հարիւրաւոր վաղամեռիկ ննջեցեալներին, որոնք այս տանջալից ու թունաւոր աշխարհից գնում էին հանգստանալու յաւիտենական անվրդով հանգստութեան գրկում, որին անկարող է դիպչել երկրային դաժան արարածների սուրն ու խարդախ սատանայակերպի աւերիչ շունչը…

Եւ հին գերեզմանները, կարծես, շշնջում էին նորաթաղների ականջներին անլսելի ձայնով.

—Եկէք, ով եղբայրներ, եկէք, հանգստացէք մեզ մօտ. այստեղ լաւ է, խաղաղ ու ապահով. այստեղ յաւիտենական հանգստի ու համեղբայրութեան

աներևոյթ թագաւորը սիրով կը հովանաւորէ երկրի վրայ ճնշվող ու կեանքը քարշ տուող մարդկանց. այստեղ չը կան նենգաւոր դաւադիրներ, մարդկային խտրութիւն, չարաշունչ ազգատեցութիւն։ Եկէք, մենք ամենքս էլ այստեղ հաւասար եղբայրներ ենք…

—Թըխկ, թըխկ… աղմկում էր գետինը, որին ձայնակցում էր թաղման մեղեդին…

* * *

Գերեզմանատան մի անկիւնում, որտեղ թաղվում էին մեծ մասամբ աղքատ դասակարգի մարդիկ և մշակ օտարականները, երկու հողի շտապով փորում էին գերեզմաններ։ Նրանցից մէկը միջին տարիների այր էր, միւսը ծերութեան շրջանը մտած՝ մօտ 58

տարեկան մարդ։ Երկուսի էլ հագուստներից հեշտ էր եզրակացնել, որ նրանք տաճկահայ գաղթականներ էին։ Վերջինիս ցնցոտիները, կարկատած չուստերը և վատառողջ կազմուածքը ցոյց էին տալիս նրա դառն աղքատութեան մէջ գտնվելը. նրա սփրթնած ճակատն իր խոշոր կնճիռներով, արևվառ սև պարանոցը, անխնամ կերպով աճած երկար բեղերն ու միրուքը լռելեայն վկայում էին, որ կեանքի հուժկու հոսանքում խեղճ ծերունին բազմաթիւ փոթորիկների է ենթարկվել։

—Մաթոս ամի, քանի տարի է Ռուսաստանում լինելդ, հարցրեց նրան միւս գերեզմանափորը, մի փոքր հանգըստանալով և մաքրելով ճակատի աննշան քրտինքը։

—Էհ, Մրտո, ինչ ասեմ. մեծ կոտորածից յետոյ փախայ իմ միանուագար որդուս հետ և եկայ այստեղ. կինս յղի

էր այն ժամանակ. իսկ հիմա ծնված որդիս 9—10 տարեկան կը լինի. արդեօք կարժանանամ տեսնել նրան, կարօտեալ կնոջս, հայրենիքս, խօսեց ծերունին թոյլ վշտաբեկ ձայնով. — և այդ միջոցին երկու խոշոր արցունքներ գլորվեցին նրա մաղոտ այտերի վրայով։

—Է՜հ, ամի, ես էլ ունեմ վաթսունում կին, երկու երեխայ, պառաւ մայր. ես էլ այստեղ կարօտի մէջ խաշվում եմ, վրայ բերեց Մրտոն։

Քաղցը յիշողութիւնները բուռն հոսանքով վերակենդանացան պանդուխտ սրտերում. նրանք լռեցին և մտքում խօսելով այդ յիշողութիւնների հետ, շարունակեցին փորել։

—Թրխկ, թրխկ, ամեն կողմում փորում էին հողը։

—Թիւրքիայի կոտորածից փախանք, բայց այստեղ, այստեղ աւելի

վատթար կոտորածի ենթարկվեցինք, շարունակեց ծերը։ Թիֆլիսից նոր էինք եկել Բ... գործ փնտրելու. Մինաս որդիս մի գործարանում ընդունվեց ութ բուբլի ամսականով, իսկ ինձ չընդունեցին, առարկելով, որ պառաւել եմ, անպէտք եմ։ Աղէտի ժամանակ և մինչև այժմ չը կայ իմ անուշիկ բալէս, չը գիտեմ, ուր է նա։ Ախ, Տէրը մի արասցէ Նրան փորձանք պատահած լինի։

Նրա ճակատն աւելի կնճռոտվեց. դէմքը մռայլվեց. արցունքները նորէն դուրս ցայտեցին նրա խոր ընկած աչքերից։

—Քանի տարեկան է Մինասդ, հարցրեց Մրտոն։

—Ջէհել ջիւան է նա, 25 տարեկան, առողջ, սիրուն տղայ. այսուհետև նա պէտք է լինի մեր օջախի նեցուկը, ես այլևս չեմ կարող աշխատել. վաղա-

ժամ ծերացել եմ, ոտս գերեզմանումն է։ Ա՜խ, ինչ լաւ կը լինէր, որ հէնց այս իմ փորած գերեզմանիս մէջ թաղվէի իմ Մինասի ձեռքով և բոլոր հայ գաղթականների վիշտն ու ցաւը հետս ընդմիշտ տանէի։

—Մաթոս ամի, ամենքս էլ մեռնելու ենք. այդպէս մի ասիլ, Աստուած կը բարկանայ։

—Աստուա՜ծ, մի՛թէ կայ Աստուած. եթէ կայ, հապա ինչու է թոյլ տալիս, որ անզէն, անպաշտպան հային ամեն տեղ հալածեն, տանջեն ու կոտորեն, ինչպէս անմեղ ոչխարի։ Չէ, Աստուած չը կայ. այս լուսաւոր, քրիստոնեայ երկրի մէջը կատարված այսչափ սրածութիւնը ինձ բոլորովին յուսահատեցրեց Աստուծոյ դէմ, ասաց Մաթոս ամին մի քանի խոր հոգոցներ հանելով, և կրկին շարունակեց փորելը։

—Աստուած ինչ անէ, ամի, քանի

որ մարդիկ այնքան են ամբարտաւանացել, կորցրել խիղճ ու արդարութիւն, որ Աստուած անզօր է նրանց հախից դալ։ Բայց հաւատացած եղիր, որ վերջ ի վերջոյ բազմաչարչար ու վաթանազուրկ հայ ժողովրդի տանջանքին վերջ կը դնէ և կը տայ նրան իր կորցրած նուիրական վաթանը, հողն ու ջուրը, կը ծաղեցնէ նրա գլխին խաղաղութեան ու երջանկութեան կենսաբեր արևը... ասաց Մրտոն խորհրդաւոր եղանակով։

—Ա՜խ, ուր է, ուր է, իհարկէ ես չեմ արժանանալ այդ օրին, թող գոնէ իմ ազիզ Մինասն ու որդիքը տեսնեն այդ երջանիկ օրը, և թող ամեն մի ճնշված մարդու գլխին ծաղէ այդ արևը, հրճուանքով գոչեց ամին, ձեռները դէպի երկինք պարզելով։

Նոյն րոպէին նրանցից մի փոքր հեռու բերեցին ու հողին յանձնեցին

մի երիտասարդ զոհի։

—Խեղճ ջիւան արև, ցաւակցեց Մաթոս ամին, մի թէ այդչափ մեծ յանցաւոր էիր հայ լինելովդ, որ ծաղիկ կեանքիդ թելը կտրել տուեցին... Եարաբ հայրդ գիտէ՞ քո մահը և երբ իմանայ, կարող է կենդանի մնալ։ Ա՜խ, թէ ինձ կը տային արիւնարբու մարդկանց դատաստանը, ես նրանց պատառ-պատառ կանէի և կը դցէի գազանների առաջ, ատամները կրճտացրեց նա և բրիչով այնպիսի մի ուժեղ հարուած իջեցրեց հողին, որ կարծես նրա աչքերին երևեցան այդ մարդհրէշները։

—Համբերութիւն, Մաթոս ամի, կը դայ ժամանակ, երբ սատանայակերպների տեղը կը բռնեն հրեշտակները...

Դաղաղակիր մարդկանցից մէկը նրման թուաց իր Մինասին. բայց երբ նա մօտից անցաւ, ծերունին զգաց իր

խաբված լինելը, և նորից իջնելով փոսի մէջ, սկսեց հողը դուրս տալ։

—Դուցէ փախել, ազատվել է քո Մինասը, ամի, հանգիստ եղիր, շատ մի վրդովուիր, աշխատեց մխիթարել Մըրտոն։

—Ի՞նչ, ինչ, փախել է, ոչ, դու նրան չես ճանաչում, նա վախկոտ հայ չէ. նա առիւծի սիրտ ու քաջութիւն ունի։ Աղէտի միջոցին նա ձեռները ծալած, նստած չէր լինի... բայց երանի անմնաս լինի մնացած։

Նրանք լռեցին և շարունակեցին գործը։ Զգալի կերպով նկատելի էր, որ ծեր վերեզմանափորը հետզհետէ ուժասպառ էր լինում։ Նրա թեների ջիլերը կանգ էին առնում։

—Մաթոս ամի, դուրս արի փոսից, մեռելը բերեցին, ձայն տուեց Մրտոն։

Ծերունին նրա օգնութեամբ դուրս եկաւ փոսից։ Ննջեցեալն արդէն գրած էր գերեզմանի շրթունքին։ Պանդուխտ դաղաղակիրները, թւով ինն հոգի, տեսնելով Մաթոս ամուն, խորհրդաւոր հայեացքներ ու շշնջոցներ փոխանակեցին իրար մէջ։ Քահանան չափազանց շտապ կարդում էր ծիսակատարութիւնը։

—Ո՞վ է ննջեցեալը, հետաքրքրութեամբ հարցրեց Մաթոս ամին։

Ոչ ոք չը պատասխանեց. բոլորն էլ արձանացած մնացին։

Խեղճ մարդը մի վատ զգացմունքով լցված վրայ ընկաւ, բացեց դագաղը։

—Մինասը, իմ բալէն... յանկարծական մի ճիչ արձակեց և ընկնելով դիակի վրայ, մնաց անշնչացած գրութեան մէջ...

Մեռեալը նրա որդին էր...

Փորը ինչ յետոյ՝ նոր փորած գերեզմանի մէջ ամփոփեցին նրա և իր

որդու դիակները, բարձրացրին մի անշուք հողաթումբ, որը լուռ, սակայն պերճախօս բարբառով գնաց կրկին անդամ բաղխելու անտարբեր յաւիտենականութեան դռները և աշխարհի հազարաւոր տառապեալների հեծեծանքները հասցնելու յաւիտենական մեծ դատաւորի ականջին...

Գերեզմանոցում աղմուկը հետզհետէ մեծանում էր. լսվում էին շարունակ սգացողների հեծկլտանքներն ու վայնասունը, որոնց արձագանք էր տալիս գերեզմանափորների միապաղաղ փորելու ձայնը.

— Թրխկ, թրխկ...

Նույն հեղինակի լույս տեսած աշխատասիրությունները՝

1. ԽՈՐՏԱԿՈՒԱԾ ՍԷՐ (վեպիկ) գինը . 30 կ.
2. ԳԻԲԱՅԻ ՍՏՐՈՒԿՆԵՐ (պատկեր) գ. 5 »
3. ԿԵԱՆՔԻ ՐՕՄԱՆԻՑ (վեպիկ) գ. . . 25 »
4. ԷՄԻԼ ԶՕԼԱ (փոքրիկ տեսութիւն) . 5 »
5. ԼՕԽՄԱՆԻ ՀԷՔԻՄԸ (պատկեր) գ. . 8 »
6. ՐԱՖՖԻ (համառօտ տեսութիւն) գ. . 10 »
7. ԿԵԱՆՔԻ ԽՈՐՇԵՐԻՑ (պատկերներ) գ. 20 »
8. ԱՌԱՋԻՆ ՄՈՒՐԱՅԿԱՆՈՒԹԻՒՆԸ (պատ.) 8 »
9. ԱՐԲԵՅՈՂԻ ՁԱՏԻԿԸ (պատկեր) գ. . 3 »
10. ՍՕՆԱՅԻ ՆՇԱՆԴՐԷԲԸ (վոդեվիլ) գ. . 15 »
11. ԹՇՈՒԱՌՆԵՐ (պատկեր) գ. . . . 8 »
12. ՄԻԵԻՆՈՅՆ ԴԱԳԱՂՈՒՄ... (պատկեր) 4 »

Թարգմանութիւնները՝

1. ԱՆԻՒՏԱ (Զեխովից) գինը . . . . 3 կ.
2. ԴԻՄԱԿ (Զեխովից) գ. . . . . 5 »
3. ՆԻՆԻԻ ՀԱՄԱՐ գ. . . . . 3 »
4. ԱՐԲԵՅՈՂՈՒԹԻԱՆ ԴԷՄ գ. . . . 15 »
5. ՃԱՊՈՆԻԱ գ. . . . . 25 »
6. ԿԻՆԸ ԵՒ ՆՐԱ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ (Կլաբ Ցեակինի) գ. . . . 25 »

Դիմել Թիֆլիս հրատարակիչներին, գրավաճառներին և հեղինակին.

(Հալաբար, Լազարևսկայա փողոց տ. Մուրադովի № 49).

ՀՀ Ազգային գրադարան
NL0323883

28622